



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

**Աֆրիկայի աշխարհագրական դիրքը, ավազիծը ,
ռելիեֆը, կլիման, բնական զոնաները**

ԱՌԱՐԿԱ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ

Հովհաննես Գասպարյան

ՄԱՐԶ

Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

**Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան հմ. 4 հիմնական
դպրոց**

Հետազոտական աշխատանք 6-րդ դասարան

Աշխարհագրություն

Դասի թեման – Աֆրիկայի աշխարհագրական դիրքը, ավազները, ռելիեֆը:

Նպատակը -

1. Ծանոթացնել Աֆրիկայի մակերևույթի հիմնական ձևերին, աշխարհագրական դիրքին՝ ըստ օվկիանոսների, գաղափար կազմի մայրցամաքի չափերի մասին:
2. Գաղափար կազմի Աֆրիկայի կլիմայական գոտիների մասին և ծանոթանա Աֆրիկայի խոշոր գետերին ու լճերին:
3. Ծանոթացնել Աֆրիկայում տարածված բնական զոնաներին:
4. Գաղափար կազմի Աֆրիկայում տարածված կենդանական աշխարհի մասին:

Վերջնականպատակը -

- Իմանա Աֆրիկայի մակերևույթը, լեռները :
- Իմանա Աֆրիկայի ավերը ողողող օվկիանոսները, ծովերը, կղզիներն ու թերկղզիները:
- Կարողանա թվարկել Աֆրիկայի կլիմայական գոտիներ և բնական զոնաներ, Աֆրիկայում տարածված անապատները :
- Ներկայացնել Աֆրիկայում տարածված կենդանատեսակները և բույսերի տեսակները:

Աֆրիկան տարածքի մեծությամբ աշխարհում երկրորդն է, 30.3մլն կմ² մակերեսով և զիջում է միայն Եվրասիային: Նախքան բուն թեմային անցնելը սովորողներին թելադրում եմ Աֆրիկայի ֆիզիկական քարտեզին վերաբերող աշխարհագրական անվանումների նումենկլատուրան՝ անվանացանկը: Անվանացանկի մեջ ներառում եմ ինչպես դասագրքում եղած աշխարհագրական անվանումներ, այնպես էլ լրացուցիչ գրականությունից ներառված տեղանուններ:


Ստորև ներկայացնում եմ սովորողներին ներկայացված անվանացանկը

հհ	Հրվանդան	Հս-Էլ Աբյադ Հվ – Ասեդի
----	----------	---------------------------

		Ալ. – Ռաս Հաֆուն Ամ – Ալմադի
1	Ծով	Միջերկրական, Կարիմի
2	Ծովածոց	Միդրայի, Գվինեական
3	Կղզի	Մադագասկար, Կանարյան
4	Թերակղզի	Սոմալի
5	Նեղուց	Զիբրալթարի, Բաբ Էլ Մանդեբի, Մոզամբիկի
6	Ջրանցք	Սուեզի
7	Ծովային հոսանքներ	Սառը - Կանարյան, Սոմալիի, Բենգելյան Տաք - Ասեդի, Գվինեական, Մոզամբիկի
8	Լեռներ	Ատլասի, Կապի, Դրակոնյան
9	Հրաբուխներ	Կրակատաու
10	Բարձրավանդակներ	Արևելյաաֆրիկյան, Եթովպական
11	Գետեր	Նեղոս, Սենեգալ, Նիգեր, Կոնգո, Օրանժ, Լիմպոպո, Զամբեզի, Շարի
12	Լճեր	Թանա, Չադ, Վիկտորիա, Նյասա, Տանգանիկա
13	Ջրվեժներ	Լիվինգսթոնի, Վիկտորիա
14	Նավահանգիստներ	Ալեքսանդրիա, Դաբար, Քեյփթաուն

Բացի այս անվանումները, նաև թելադրում եմ մի շարք երկրների անվանումներ իրենց մայրաքաղաքներով, որոնք սովորողները անց են կացնում ուրվագծային քարտեզների վրա: Սովորողները այդ աշխատանքը կատարում են ինչպես դպրոցում՝ խմբային աշխատանքի միջոցով, ինչպես նաև տնային աշխատանքի միջոցով: Աշխարհագրական դիրքը ներկայացնելիս շեշտը պետք է դնել Աֆրիկայի երկրագնդի իր ունեցած աշխարհագրական դիրքով: Հասարակածը անցնում է Աֆրիկայի գրեթե կենտրոնով, որ նրա հյուսիսային Էլ-Աբյադ և հարավային Ասեդի հրվանդանները գտնվում են հասարակածից կարճես նույն հեռավորության վրա և միևնույն կլիմայական գոտիներում՝ մերձարևադարձային: Հենց այս փաստի հիմնան վրա էլ ապացուցվում է Աֆրիկայի ամենատաք մայրցամաք լինելու փաստը: Գլխավոր միջօրեականը անցնում է Աֆրիկայի արևմտյան մասով, ուստի մայրցամաքի տարածքի մեծ մասը ընկած է արևելյան կիսագնդում: Աշխարհագրական դիրքը ներկայացնելիս հիշեցնում եմ սովորողներին Աֆրիկայի ափագծերը, ափերը ողողող հյուսիսից Միջերկրական ծովի, հյուսիս-արևելքից Կարմիր ծովի,

Սուեզի ջրանցքի, Ջիբրալթարի, Բաբ Էլ Մանդեբի և Օրմուզի նեղուցների աշխարհագրական դիրքերի մասին:



Սուեզի ջրանցքը փորվել է 1869թվականին, ունի 161կմ երկարություն: Սովորողները լրացուցիչ ինֆորմացիա են պատրաստում Սուեզի ջրանցքի, նրա ռազմաստրատեգիական նշանակության մասին: Հանձնարարվում է պատրաստել տեսասահիկներ, Սուեզի, ինչպես նաև համահունչ նշանակություն ունեցող աշխարհի մյուս ջրանցքների ու նեղուցների՝ Պանամայի, Քիլի ջրանցքներ, Մալակկայի, Ջիբրալթարի, Չոնդյան նեղուցների վերաբերյալ:



Սուեզի ջրանցք

Աֆրիկայի ռեյիեֆի մասին քննարկումները սկսում են հնագույն Աֆրիկյան պլատֆորմի մասին խոսքով, հիշեցնելով, որ ժամանակին եղել է հնագույն գերմայրցամաք Գոնդվանայի մի մասը: Նրա պլատֆորմային մասը այսօր ռեյիեֆի ինչ ձևերով է ներկայացված՝ Սահարայի, Կալահարիի սարահարթեր, Կոնգոյի ավազան և այլն: Ներկայացնում են նաև Աֆրիկայի Մեծ բեկվածքը, դրա դարավոր շարժումների հետևանքով ներկայիս դրսևորումները, և հետևանքները: Սովորողներին հարց են հղում՝ ինչ կանխատեսումներ ունեն Աֆրիկա մայրցամաքի հետագա տեսքի վերաբերյալ, եթե Մեծ բեկվածքի տրոհման գործընթացը շարունակվի ներկայիս տեմպերով: Առանձնակի ուշադրություն դարձնել Աֆրիկայում գտնվող երկու բարձրավանդակների՝ Եթովպական և Արևելաաֆրիկյան բարձրավանդակների վրա, որոնցից վերջինումս էլ գտնվում է Աֆրիկայի ամենաբարձր կետը՝ Կիլիմանջարո հանգած հրաբուխը /տեղացիների լեզվով բառացի թարգմանվում է «ձյան թագուհու կացարան», ի դեպ սովորողները իրենց տեսրերում ունեն բառարանային մաս, ուր իմ ուղղորդմամբ գրի են առնում աշխարհագրական անունների թարգմանությունները:/ 5895մ բացարձակ բարձրությամբ և իր հավերժական ձյան շերտով: Աֆրիկայի ամենահայտնի գործող հրաբուխը Կամերունն է՝ Գվինեական ծոցի ափին՝ 4070մ բարձրությամբ:



Կլիմանջարո հրաբուխ

Գեոսինկլինալային գոտիները Աֆրիկայում ներկայացված են մայրցամաքաի հյուսիսարևմուտքում երիտասարդ ու բարձր Ատլասի լեռներով, որի բարձր գագաթը Թուբկալ լեռն է 4165մ բացարձակ բարձրությամբ: Մայրցամաքի ծայր հարավը ներկայացված է հին ու քայքայված Կապի իսկ հարավ արևելքը հնագույն ծալքավորման Դրակոնյան լեռներով:

Աֆրիկայի կլիմայական պայմանները հիմնականում պատճառ են նրա աշխարհագրական դիրքի՝ գրեթե կենտրոնով անցնում է հասարակածը, իսկ Աֆրիկայի տարածքի մեծ մասը գտնվում է հյուսիսային և հարավային արևադարձերի միջև: Դա է պատճառը, որ Աֆրիկան համարվում է ամենատաք մայրցամաքը: Նրա միայն ծայր հյուսիսային և ծայր հարավային շրջաններն են գտնվում մերձարևադարձային կլիմայական գոտու սահմաններում: Կլիմայի ձևավորման վրա մեծ դեր են կատարում նաև ավերը ողողող ծովերն ու օվկիանոսները, դրանցով անցնող ծովային տաք ու սառը հոսանքները՝ Կանարյան, Սոմալիի և Բենգեյան սառը, ինչպես նաև Գվինեական, Անգոլական և Մոզամբիկի տաք հոսանքները: Սահարա անապատում է գրանցվել օդի ջերմաստիճանի աշխարհի ամենաբարձր ցուցանիշը՝ +58.10° Էլ-Ջուֆ բնակատեղիում: Աֆրիկայի Գվինեական ծոցի ափին՝ Կամերուն լեռան ստորոտում է գտնվում Աֆրիկայի ամենախոնավ վայրը, ուր տեղումների տարեկան քանակը կազմում է 10000մմ: Հենց կլիմայական պայմանները թելադրել են Աֆրիկայի ջրագրական ցանցը: Աֆրիկայում է գտնվում աշխարհի ամենաերկար գետը՝ Նեղոսը՝ 6671կմ երկարությամբ, որը կազմավորվում է երկու գլխավոր վտակներով՝ Մալիտակ և կապույտ Նեղոսները:



Նեղոս

Կապույտ Նեղոսը սկիզբ է առնում Եթովպական բարձրավանդակում գտնվող Թանա լճից, իսկ Սպիտակ Նեղոսը սկիզբ է առնում Արևելաաֆրիկյան բարձրավանդակում և Մեծ բեկվածքի գոտում գտնվող Վիկտորիա լճից: Նեղոս գետը համարվում է Աֆրիկայի հյուսիս արևելյան հատվածի քաղցրահամ ջրի գլխավոր, կարելի է ասել միակ կենսաբար աղբյուրը: Բզուր չէ հայտնի արտահայտությունը, որ «Եգիպտոսը Նեղոսի պարզն է»: Պատկերավորման խոսքերը ևս սովորողները գրի են առնում իրենց տեսրերում: Եգիպտացիները Նեղոսին անվանում են «Էլ Բախր», որը արաբերենից թարգմանաբար նշանակում է «Մեծ արաբական գետ»: Այն թափվում է Միջերկրական ծով առաջացնելով մեծ դելտա: Միջերկրական ծովի ավազանին պատկանող մյուս գետերն են՝ Սենեգալ, Կոնգո, Օրանժ: Կոնգոն համարվում է աշխարհի երկրորդ ջրառատ գետը Ամազոնից հետո, որն ունի 40000մ³/վրկ ջրի ծախս, երկու անգամ հատում է հասանակածը՝ ինչով էլ բացատրվում է գետի ջրառատությունը: Կոնգոն առանց դելտա առաջացնելու, լայն հորձանքով լցվում է Ատլանտյան օվկիանոս: Նրա վրա են գտնվում Լիվինգսթոնի շուրջ 30 ջրվեժներից կազմված կասկադը: Հնդկական օվկիանոսի ավազանին պատկանող առավել հայտնի գետը Զամբեզին է, որի վրա գտնվում է աշխարհի ջրառատ ջրվեժներից մեկը՝ Վիկտորիան, որն ունի շուրջ 120 մ բարձրություն: Ներքին հոսքի ավազանին պատկանող ամենախոշոր գետը Շարին է, որը թափվում է Զադ լիճ:



Վիկտորիա ջրվեժ

Առավել հետաքրքիր են Աֆրիկայի լճային գոգավորությունների դասավորվածությունը և առավելապես Մեծ բեկվածքի սահմաններում: Այստեղ գտնվող լճերը հիմնականում ունեն տեկտոնական ծագում՝ Վիկտորիա, Տանգանիկա, Նյասա, Մվերու: Դրանցից Տանգանիկան համարվում է աշխարհում երկրորդ խորը լիճը՝ 1470մ խորությամբ, որը զիջում է միայն Եվրասիայում գտնվող Բայկալ լճին /1620մ/:



Տանգանիկա լիճ

Վիկտորիան ունի 80մ խորություն և առաջացել է տեկտոնական թեք իջվածքի տեղում: Մնացորդային ծագման լճերից հայտնի է Չադ լիճը, որը գտնվում է Մահարա անապատի սրտում:

Աշխարհի ամենահետաքրքիր լճերից մեկը գտնվում է Աֆրիկայում՝ Ալժիրում, Միդի-Բել-Աբես քաղաքի մոտ, որն ամբողջովին կազմված է թանաքից: Դրա բացատրությունը նրանում է, որ լիճ են թափվում երկու գետեր, որոնցից մեկը մեծ քանակությամբ լուծված երկաթի աղեր է պարունակում, իսկ մյուս գետը հոսքի ընթացքում անցնում է ընդարձակ տորֆային ճահիճներով պատված հարթություններով, որոնք էլ իրար միխառնվելով առաջացնում է բնական թանաք: Լիճը կենդանազուրկ և բուսազուրկ է:

Բնական է, որ այսպիսի հարուստ «կենսագրություն» ունենալով Աֆրիկյան կունենա հարուստ ու բազմաբնույթ բնական զոնաներ՝ իրենց բնորոշ բուսական ու կենդանական աշխարհով: Աֆրիկայում հասարակածից հյուսիս ու հարավ իրար հաջորդաբար փոխարինում են.

- Հասարակածային խոնավ մշտադալար անտառների



- Սավանաների ու նոսր անտառների



- Անապատների ու կիսաանապատների



- Մերձարևադարձային կոշտատերև մշտականաչ անտառների ու թփուտների զոնաները



Աֆրիկյան հարուստ է էնդեմիկ բուսական և կենդանական տեսակներով: Հասարակածային անտառներում հայտնի է ցեցե ճանճը, որի խայթոցը մահացու վտանգավոր է կենդանիների համար, իսկ մարդկանց մոտ առաջանում է քնախտ հիվանդությունը: Այս անտառները բազմաշարահարկ են՝ ներկայացված ֆիկուսներով, արմավենիներով, պտերանման բույսերով, աճում են նաև երկաթածառ, հացի ծառը, միմոզան, սուրճի ծառ, շոկոլադի ծառ, որոնք բոլորը էնդեմիկ են համարվում Աֆրիկայի համար /էնդեմիկ են համարվում այն բույսերն ու կենդանիները, որոնք բնական վիճակում բնորոշ են միայն տվյալ տարածքին/: Սավանաների ու նոսր անտառների բնական զոնան համարվում է ամենահարուստ կենդանական աշխարհ ունեցող բնական զոնան, և այն զբաղեցնում է Աֆրիկայի մակերեսի շուրջ 40%-ը: Առավել հայտնի են էնդեմիկ կենդանատեսակները՝ այծքաղը, գեբբը, փիղը, ընձուղտը, գոմեշը, ռնգեղջյուրը, գետաձին և այլն: Հարուստ է նաև բուսական աշխարհի տեսակազմը՝ աշխարհում ամենահաստատված ծառը՝ բաոբաբը, միմոզան, հովհարաձև ակացիան և այլն: Այս դասի անցկացման ընթացքում իմ առջև դրված առաջնային խնդիրն է, որ սովորողը իմանա Աֆրիկայի մակերևույթը, լեռները, իմանա Աֆրիկայի ափերը ողողող օվկիանոսները, ծովերը, նեղուցներն ու ջրանցքները, կղզիներն ու թերկղզիները, ափերով անցնող ծովային տաք և սառը հոսանքները, կարողանա թվարկել Աֆրիկայի հիմնական և անցումնային կլիմայական գոտիներ և բնական զոնաներ, Աֆրիկայում տարածված անապատները, կարողանա և երկայացնել Աֆրիկայում տարածված կենդանատեսակները և բույսերի տեսակները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն: Մ.Իսկանդարյան
2. Աշխարհագրություն 6-րդ դասարան: Երևան 2018